

տեսնենք զՊապ, որ «յոտն կացեալ, հո-
րանեալ», որ հասկանալի է պատմութեանին
թեզանիքը հանգրիճած՝ քան զգեստի ու-
րիշ թեթեւացում մը¹, «ի մէջգետին»² ան-
ցեալ», այս ինքն մէջտեղ գալով, սու-
տակասպասութեան վատթարագոյն օրինա-
կաւ թունալից «անապակ մատուցանէր»
Ս. Ներսեսի (Փաւս. 216): Պատիւ մը, զոր
իրաւ կամ կեղծ՝ անշուշտ հայրապետին
միայն կրնար ընծայել արշակունի թագա-
ւոր մը: Ընդ հակառակն իւր բարեպաշ-
տութեան ճշմարիտ թելադրութեամբն էր՝
որ խաչենացի պատուական ազատն Հա-
սան՝ իւր ծանօթ ճաշին ժամանակ «ինք-
նին իսկ ձեռօք իւրովը պաշտէր զբազ-
մեալսն» (Կիր. 147): Եւ այս քաղաքա-
վար ցոյցը կը յարատեւէ միշտ. եւ ոմանց
միայն յատուկ չէ, այլ ամենուն, ըսել
տալու համար Նիւսացւոյն մեկնչին՝ թէ
«սովոր են մարդիկ» որ հրաւիրողներն
«անձամբ պաշտեն զսեղանն» (Լծ. Հյր.
ԺԴ):

1. Զի վերեւ (157) իւր գլուխն յայտնապէս բաց տե-
սանք, եւ սամուրի զործածութիւնն անհաւանական: Իսկ
«հոլանեալ» մասնական մերկացման համար եւս կրնար
ըսուիլ, ինչպէս զլիսոյ (Գ. Մակ. Դ, 6), որ եւ «հոլանի»
կ'ըսէին (Ա. Կոր. ԺԱ, 13):

2. Մէկ բառ՝ ըստ ուղղագր. Տ. Ն. Բիւզանդացւոյ
(Կոր. Վրդ. 245-6):